ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 9, 1950 *Общественные науки*

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՍՈՒՐԵՆ ՍՊԱՆԴԱՐՅԱՆԸ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐՎԵՍՏԻ ՄԱՍԻՆ[1]

Լենինի—Ստալինի գործին անվերապահորեն նվիրված ռևոլուցիոն գործիչ, բոցաշունչ բոլշևիկ Սուրեն Սպանդարյանի գրականագիտական և տեսական հոդվածները խոշոր նշանակություն ունեն, ուստի նրանց լույսընծայումը առանձին ժողովածվով միանգամայն ողջունելի է։

Ժողովածուն պատկերացում է տալիս, թե ինչպես աննկուն բոլշևիկ Սպանդարյանը առանձին գրողների ու գրական երևույթների գնահատման ժամանակ ելակետ է ունեցել Լենինի—Ստալինի ուսմունքը արվեստի ու գրականության մասին, որի հիմքում ընկած է պարտիականության սկզբունքը։

Ժողովածվում հոդվածները դասավորված են ըստ իրենց բնույթի։

«Գրականության մասին» բաժնում տեղավորված են ռուս մեծ գրող Լ. Ն. Տոլստոյի, հայ պրոլետարական բանաստեղծ Հակոբ Հակոբյանի, Ալ. Շիրվանզադեի, ինչպես նաև գրականության պարտիականության և ռուս գրականության գնահատության հարցերին վերաբերող մի շարք հոդվածներ։

«Հայ պարբերական հրատարակությունների մասին» և «Ժուռնալիստիկա» բաժիններում զետեղված հոդվածները օգնում են ընթերցողին ավելի լրիվ գաղափար կազմելու իր ժամանակի հասարակական-քաղաքական հուզող հարցերով ապրող, հասարակական ակտիվ գործիչ Սպանդարյանի մասին։

«Թատերական ռեցենզիաներ և ժողովրդական տան մասին» բաժնի հոդվածները վառ գաղափար են տալիս այն պայքարի մասին, որ մղում էր անձնվեր բոլշևիկը իսկական ժողովրդական թատրոն, ռեալիստական արվեստ ստեղծելու համար։

«Կուլտուրայի, կրթության և ժողովրդական լուսավորության հարցերի մասին» բաժնում բերված հոդվածները ցույց են տալիս ագիտացիոն-պրոպագանդիստական այն հսկայական աշխատանքը, որ կատարել է Ս. Սպանդարյանը աշխատավորության կրթության լուսավորության ուղղությամբ։

* * *

Ս. Սպանդարյանի գրական-քննադատական հայացքները անխզելիորեն կապված են նրա ռևոլուցիոն գործունեության հետ, այն պայքարի, որ մղում էր նա բոլշևիկյան պարտիայի, Լենինի—Ստալինի գլխավորությամբ։

Ժողովուրդների մեծ առաջնորդ ընկեր Ստալինը, որ իր ռևոլուցիոն կյանքի ընթացքում առիթ է ունեցել մոտիկից ճանաչելու Սուրեն Սպանդարյանին, ասել է. «Սուրենին մենք չենք մոռանա։ Ռևոլուցիայի համար աշխատեցեք այնպես, ինչպես աշխատում էր Սուրենը»։[1]

Մեծ առաջնորդի այդ բարձր գնահատականում արտացոլված է ռևոլուցիոն պայքարի այն պայծառ ուղին, որ հերոսաբար անցել է պրոֆեսիոնալ ռևոլուցիոներ Սուրեն Սպանդարյանը։ Սպանդարյանի գիտակցական ամբողջ կյանքը բանվոր դասակարգի ազատագրական գործին ծառայելու անձնուրաց օրինակ է։

Զինվորագրվելով Լենինի—Ստալինի մեծ պարտիային, գործելով նրանց անմիջական ցուցումներով, Սպանդարյանն իր մարտական ընկեր և բարեկամ Ստ. Շահումյանի հետ միասին, չնայած ցարական ռեակցիայի և կոնտրռևոլուցիայի ստեղծած բոլոր արգելքներին, պայքար էր մղում ռևոլուցիայի վերջնական հաղթանակի համար, ժողովուրդների ազատության, անկախության և բարեկամության համար։

Բոցավառ սեր դեպի Լենինի—Ստալինի մեծ պարտիան, անսասան հավատ դեպի սոցիալիստական ռևոլուցիայի վերջնական հաղթանակը—ահա այն ամենազոր ուժը, որ միացնում էր Սպանդարյանին և Շահումյանին և հանդիսանում էր նրանց մտերմության հիմքը։

Ստ. Շահումյանը, 1916 թվին, բնութագրելով Ս. Սպանդարյանի հերոսական կյանքն ու գործունեությունը, գրում էր. «Սպանդարյանի

[1] *Սուրեն Սպանդարյան, Հոդվածներ գրականության, արվեստի, կուլտուրայի և կրթության մասին։ Կազմեց՝ Վ. Ավետիսյան։ Հայպետհրատ, Երևան, 1949։*

[1] В. Швейцер, Сталин в Туруханской ссылке. стр. 44.

քաղաքական հոգևոր ուսուցիչները չեն եղել և չէին կարող լինել Ստ. Նազարյան, Արծրունի, Բաֆֆի, Քրիստ. Միքայելյան։ Նրա հոգևոր հայրերն ու ուսուցիչները եղել են Չերնիշևսկի, Բելինսկի, Պլեխանով և ապա Մարքս, Էնգելս...»[1]

Պրոլետարական բանաստեղծ Հ. Հակոբյանը ասել է, որ Սպանդարյանը «մեկն էր այն հազարավորներից, որոնք կարմիր շապիկով են ծնվում և ճերմակ սավանի մեջ մեռնում դաժան ցրտաշունչ հյուսիսում...»[2]

«Իր կյանքի վերջին օրերը Տուրուխանյան դաժան աքսորում անցկացրած Սպանդարյանը, չնայած սոսկալի սառնամանիքներին և կարիքին, մեծ Ստալինի անմիջական ցուցումներով, ծավալում է ռևոլուցիոն եռանդուն պայքար, Մոնաստիրսկոյե գյուղը դարձնելով Սիբիրում աքսորված բոլշևիկ աքսորականների պարտիական-քաղաքական աշխատանքի կենտրոնը։

Զ. Լ. Շվեյցերը իր հիշողությունների մեջ խոսելով Ս. Սպանդարյանի կյանքի վերջին օրերի մասին, գրում է. «Սուրենը մեռնում էր... բայց մահանալիս էլ նա միշտ մտածում էր այն մասին, ինչին որ տվել էր նա իր սքանչելի կյանքն առանց մնացորդի։ Նա խնդրում էր ինձ գրել Ստալինին, որ ռևոլուցիան Ռուսաստանում արդեն հաստնացել է, որ ցարական բանակը քայքայվում է, որ «Ռեվոլուցիան կանգնած է 17 թվի շեմքին...»։ Վագոնում զառանցանքի մեջ նա կրկնում էր «Կանգնեցեք Լենինի դրոշի տակ»։ Եվ նույն այս բառերը շուրթերին դադարեց բարախելուց բոլշևիկի սիրտը»։[3]

Իր գաղափարական ընկերներից և հարազատներից բաժանված, խստաշունչ Սիբիրում գտնված Ս. Սպանդարյանը հանդիպելով ընկեր Ստալինին, պայքարի նոր լիցք է ստանում, ավելի է զոտեպնդվում և խանդավառվում իր մղած ռևոլուցիոն պայքարում։

* * *

Օրինակ վերցնելով բանվոր դասակարգի հանճարեղ առաջնորդներ Մարքսի, Էնգելսի, Լենինի, Ստալինի աշխատանքի մեծ փորձից, Ս. Սպանդարյանն իր մղած ռևոլուցիոն պայքարի ընթացքում հաճախ է դիմել գեղարվեստական գրականությանը, օգտագործել այն իր քաղաքական պրակտիկ աշխատանքում։

Լենինյան-ստալինյան պարտիականության սկզբունքով մոտենալով հասարակական կյանքի և գրականության հարցերին, Ս. Սպանդարյանը բազմաթիվ հետաքրքրական փաստերով մերկացնում էր բուրժուական վեղարավոր էսթետների այն կեղտոտ սուտը, թե իբր կարող է քաղաքական-հասարակական գործիչ-մտածող լինել, առանց այս կամ այն պարտիային պատկանելու։

1911 թվին „Листок-Копейка" թերթում հրատարակած իր «Պարտիականության և անպարտիականության մասին» հոդվածում Ս. Սպանդարյանը գրում է. «... յուրաքանչյուր հասարակական գործիչ պետք է ունենա գործունեության այս կամ այն ծրագիրը, այս կամ այն «հավատո հանդանակը», հասարակական գործերի և սրանց ուղղության տեսնենցի այս կամ այն հասկացողությունը։ Հասարակական գործիչն առանց սոցիալ-քաղաքական որոշ դեմքի՝ դա, գնրմանացիների արտահայտությամբ, մի դատարկ աղիք է, որ կարելի է լցնել ինչով ուզես, դա մի հոդմացույց է, որ դառնում է քամու ուղղությամբ, դա մի ոչնչություն է, որի վրա կարող են ադդել բոլորն ու ամեն ինչ, վերջապես դա ամենաղղվելի օպորտունիստն է, որի ամբողջ քաղաքականությունը հանգում է մոմենտին հարմարվելուն և այն էլ՝ նվազագույն դիմադրության գծով»։[1]

Ինչպես ճիշտ կերպով նկատում է Ս. Սպանդարյանը, չկա ապահասարակական մարդ և գրական գործիչ, հասարակական կյանքում գոյություն ունեցող կամ ստեղծվող ամեն մի երևույթ կապված է այս կամ այն դասակարգի՝ այս կամ այն խմբակցության քաղաքական աշխարհհրամրոնման հետ, իր հիմքում պարտիական է, ծառայում է տվյալ դասակարգի ձգտումների իրականացմանը։

Ս. Սպանդարյանն իր վերոհիշյալ հոդվածը գրելիս որպես ուղեցույց ծրագիր ունեցել է Լենինի «Պարտիական կազմակերպություն և պարտիական գրականություն» հռչակավոր հոդվածը (1905 թ.), որի մեջ գրականությունը դիտելով որպես պրոլետարիատի իդեոլոգիական պայքարի դենքերից մեկը, Լենինը գրում է. «Գրականությունը պետք է դառնա պարտիական։ Որպես հակակշիռ բուրժուական բարքերին, որպես հակակշիռ բուրժուական ձեռնարկատիրական, չարչիական մամուլին, որպես հակակշիռ բուրժուական գրական կարիերիզմին ու ինդիվիդուալիզմին, «աղայական անարխիզմին» և շահամոլությանը,— սոցիալիստական պրոլետարիատը պետք է

[1] Ստ. Շահումյան, Ընտիր երկեր, 1949 թ., էջ 424։

[2] «Պայքար», 1916 թ., № 38։

[3] Комсомольский пропагандист и агитатор № 13 (17), 1937 г.

[1] Ս. Սպանդարյան, Հոդվածներ գրականության, արվեստի, կուլտուրայի և կրթության մասին, 1949 թ., էջ 21։

առաջադրի պատմական զարգացման սկզբունքը, զարգացնի այդ սկզբունքը և հնարավորության չափ ավելի լրիվ և ավելի ամբողջական ձևով կենսագործի այն»։[1]

Այսպիսով, ի հակադրություն բուրժուական՝ արվեստը արվեստի համար լոզունգի, ըստ որի գրականությունը դառնում է ժողովրդից կտրված, մի խումբ մոնոպոլիստների սեփականություն, պրոլետարիատը առաջ է քաշում՝ արվեստը հասարակության, ժողովրդի համար լոզունգը, ձգտում է գրականությունը մոտեցնել լայն մասսաներին, դարձնել այն աշխատավորության օրինական սեփականությունը։

«Հայ, ինչպես դեմոկրատական ինտելիգենցիան—գրում է Ս. Սպանդարյանը—պետք է գրականությունը մոտեցնի ժողովրդին, այն դարձնի ժողովրդական՝ բառիս լայն իմաստով և այն ժամանակ իրենց գրողներին կմեծարեն բնակչության լայն խավերը և առիթ չի լինի աղաչելու հայ բուրժուաներին, որ «հանուն հայրենիքի սիրո և ազգային հպարտության» բանան իրենց տոզած քսակը»։[2] Որպես աշխատավորության շահերով մտահոգված ռևոլյուցիոն գործիչ, Ս. Սպանդարյանը կոչ է անում հայ առաջավոր ինտելիգենցիային՝ ինչպես գրականության, այնպես էլ հասարակական կյանքի մյուս բնագավառներում «անմիջականորեն և ընդհուպ մերձենալ ժողովրդական մասսաների իսկական կարիքներին ու ցավերին»։[3] Այդ նշանակում է պայքար ծավալել ժողովրդի կյանքը ռեալիստորեն պատկերող գրականության համար, այնպիսի գրականության, որի մեջ տիպականորեն և ճըշմարտացիորեն արտացոլվի ժողովրդական մասսաների մղած ազատագրական պայքարը, այդ պայքարը գլխավորող առաջավոր դասակարգի՝ պրոլետարիատի վերջնական հաղթանակը։ Այդ նույն ձևով էր դնում հարցը Ստ. Շահումյանը Ղ. Աղայանի գրական-հասարակական գործունեության 40-ամյա հոբելյանի առթիվ արտասանած իր հայտնի ճառում։

Պարտիական սրությամբ գրված այդ հոդվածում Շահումյանը պահանջում էր գրականությունը դարձնել «հասարակական, ժողովրդական» խավերի սեփականություն, այն ծառայեցնել աշխատավորության շահերի պաշտպանությանը։

Ժողովրդական առաջավոր գրականություն և արվեստ ստեղծելու հարցը Սպանդարյանն առաջ է քաշում իր մի շարք հոդվածներում՝ գրված Թիֆլիսի Զուբալովի անվան ժողովրդական տան թատերական ներկայացումների առթիվ։ Իրեն հատուկ կրքոտությամբ քննադատելով Զուբալովի անվան ժողովրդական տանը տրված կաֆե-շանտանային գռեհիկ ներկայացումները, Սպանդարյանը գրում է. «Ժամանակն է, որ պրոֆեսիոնալ դերասանների մասնակցությամբ ներկայացումներ գնելու միջոցով ըստ քաղաքային ինքնավարության կից հատուկ հանձնաժողովի հավանած ռեպերտուարի, ժողովրդի համար ստեղծվի ինչպես գեղարվեստական թատրոն և ոչ թե ժողովրդական զվարճության այնքան լուրջ գործը դարձվի «սիրողների մարզանքներ»՝ նրանց բեմական հակումները բավարարելու համար։

Բուրժուական ռեակցիոն գրականության և միստիցիզմի դեմ Ս. Սպանդարյանի գրած հոդվածների մեջ աչքի է ընկնում «Էքսվարդապետ Երվանդը և Գ. Ի. Պիճիկյանը» հոդվածը։ Սուր քննադատության ենթարկելով պահպանողական Գ. Պիճիկյանին՝ նրա «Էջմիածինը և հայկական մամուլը» հոդվածի համար, որի մեջ շռայլորեն պճնազարդված է էքս-վարդապետ Երվանդը (Ե. Տեր-Մինասյան), Ս. Սպանդարյանը քաղաքական սարկազմի է ենթարկում Ե. Տեր-Մինասյանի «Հայկական եկեղեցու վերածնունդը» հոդվածը, ցույց տալով նրա քրիստոնեական «փիլիսոփայության» զավեշտական էությունը։

Ինչպես Ս. Սպանդարյանն է գրում՝ «Էքսվարդապետ Երվանդը... կրոնին մոտենում է այնպիսի թեթևամիտ տեսքով, փիլիսոփայական և պատմական այնպիսի թեթև բազմոզ, որ ակամայից անհամբեր ես զգում այն լսարանի, այսինքն հայ հասարակության փոխարեն, որ կարող է գրել և բանավիճել այս՝ բոլոր տեսակետներից անգրագետ գրքույկի առթիվ»։[1]

Էքս-վարդապետ Երվանդի նպատակն է, ինչպես դիպուկ ծաղրով ասում է Ս. Սպանդարյանը, «տերտերներին աշխարհական դարձնել, իսկ բոլոր աշխարհականներին՝ տերտերներ»։

Ուշագրավ են Ս. Սպանդարյանի հոդվածները, գրված հայ մեծանուն գրող Ալ. Շիրվանզադեի գրական գործունեության 30-ամյա հոբելյանի առթիվ (1911 թ.)։ Սրանց ողջունելով Ալ. Շիրվանզադեի հոբելյանի առթիվ ծավալվող նախապատրաստական աշխատանքը, Ս. Սպանդարյանը հանձնաժողովի առաջ խընդիր է դնում մեծ վիպասանի գրական գործունեության 30-ամյա հանդեսին լայնորեն

---

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 10, էջ 40։

[2] Ս. Սպանդարյան, Հոդվածներ, էջ 45։

[3] Նույն տեղում, էջ 46։

[4] Նույն տեղում։

---

[1] Ս. Սպանդարյան, Հոդվածներ, էջ 47։

մասնակից դարձնել ընթերցող հասարակությանը, ժողովրդին, որը միակ ճիշտ գնահատողն ու մեծարողն է հանդիսանում յուրաքանչյուր խոշոր գրողի և արվեստագետի։

Բուրժուական հասարակակարգում, ինչպես նշում է Ս. Սպանդարյանը, «հորելյանները չեն կրում ժողովրդական բնույթ, այլ հանդիսանում են մի բուռ մարդկանց գործ»։

Սպանդարյանը լավ ըմբռնելով Ալ. Շիրվանզադեի հորելյանի առթիվ հայ բուրժուազիայի («հորիզոնականների») կողմից մամուլում բարձրացված աղմուկի և իրարանցման իմաստը, գրում է. «...գուցե Շիրվանզադեի երկերում արծարծվող գաղափարները, որոնք դուրս չեն գալիս ամենասովորական միջնադարյան լիբերալիզմի սահմաններից, «հորիզոնականներին» համար հանդիսանում են առաջադիմության վերջին խոսք, բայց համենայն դեպս թերթի այդ պնդումը ճիշտ չէ, հենց այն պատճառով, որ չի պարունակում պատմական ճշմարտություն...»[1]

Ս. Սպանդարյանը չբացասելով Ալ. Շիրվանզադեի բարձր տաղանդն ու այն ռեալիստական մերկացումները, որ կատարել է նա բուրժուական հասարակության նկատմամբ, քննադատության է ենթարկում Շիրվանզադեի ստեղծագործությունում և հասարակական կյանքում արտահայտված լիբերալիզմը, դեպի խոշոր բուրժուազիան ունեցած նրա պահպանողականությունը, որի համար ե նրան քննում, «մեծարում» էր բուրժուական ծախված մամուլը։ Այդ տեսակետից բոլշևիկ քննադատը հիշեցնում է այն տխուր փաստը, թե ինչպես Շիրվանզադեի հորելյանական հանձնաժողովի նախագահ էր նշանակված հայտնի նավթարդյունաբերող Մանթաշևը։

Ուշագրավ է Ս. Սպանդարյանի «Գրախոսականը» (1911 թ. „Листок-Копейка")՝ գրված պրոլետարական մեծ բանաստեղծ Հ. Հակոբյանի «Նոր առավոտ» պոեմի մասին։ Ս.Սպանդարյանը համոզիչ կերպով ցույց է տալիս Հ. Հակոբյանի պոեզիայի ինքնատիպությունը, մի պոեզիայի, որն, ինչպես նա է ասում՝ «թմբկահարբենասիրական» թեմաներից անցել է «համամարդկային բնույթ կրող բոլորովին նոր մոտիվների»։ «Նոր առավոտ» պոեմի գաղափարական էությունը Ս. Սպանդարյանը միանգամայն ճիշտ կերպով համարում է «ինդիվիդուալ և հասարակական ձգտումների ընդհարումը անհատի մեջ», վերջիններիս անխուսափելի հաղթանակը։ Հ. Հակոբյանի ստեղծագործությանը տրված այդպիսի գնահատականը բխում է Ս. Սպանդարյանի բոլշևիկյան աշխարհայացքից, հարցի մարքսիստական և ճիշտ կողմնորոշումից։ Այդպես բարձր է գնահատել և արժեքավորել Հակոբ Հակոբյանի «Նոր առավոտ» պոեմը նաև Ստ. Շահումյանը։ Ս. Սպանդարյանի և Ստ. Շահումյանի անկեղծ վերաբերմունքը դեպի Հակոբ Հակոբյանը միանգամայն հասկանալի է։ Գնահատել և պաշտպանել Հակոբյանին, նշանակում էր կոր-ծանիչ հարված հասցնել հայ բուրժուական նացիոնալիստներին, բոլոր նրանց, ովքեր արհամարհելով և վիրավորելով Հ.Հակոբյանին, նսեմացնելով նրա ստեղծագործությունը, փաստորեն արդելք էին հանդիսանում հայ պրոլետարական պոեզիայի սկզբնավորմանն ու զարգացմանը։ Ս. Սպանդարյանը և Ստ. Շահումյանը մեծապես օգնում էին հայ պրոլետարական գրականությանը։ Դրա փայլուն ապացույցն է հանդիսանում Հ. Հակոբյանի և նրա զբաղակից ընկերների (Մ. Արաղի, Ան. Վարդանյան, Մ. Պետրոսյան և այլն) կողմից ծավալած այն նոր գրական շարժումը, որը կայուն հիմք դրեց հայ պրոլետարական գրականությանը։

* * *

Մեծ արժեք են ներկայացնում Ս. Սպանդարյանի գիտողություններն ու կարծիքները ռուս գրականության և արվեստի մասին։ Սպանդարյանը ոչ միայն բարձր է գնահատել ռուս գրականության դերն ու նշանակությունը հայ կուլտուրայի զարգացման համար, այլև օգտագործելով ռուս կլասիկ գրողների խոսքերն ու ասույթները, իր քաղաքական պոլեմիկան դարձրել է ավելի շեշտակի և դիպուկ։

Բուրժուական երկերեսանիների՝ կադետների դեմ գրած իր «Քաղաքական ակնարկներ» հոդվածաշարքը Ս. Սպանդարյանն ավարտում է պրոլետարական մեծ գրող Մ. Գորկու «Մրրկահավի երգի» հետևյալ մարտական խոսքերով. «Բարձրանում է ռևոլուցիայի ալիքը, սկսվում է մակընթացությունը. թող շուտ պայթի փոթորիկը»։[1] Ոչնչացնող հարված հասցնելով Մ. Գորկու թշնամիներին՝ լիբերալ բուրժուական գրչակներին, Սպանդարյանը գրում է. «Կան շատ սովորական լիբերալ ճիչեր, ֆանատիզմի, աղանդավորության մասին, կա Մ. Գորկուն կրունկից կծելու փորձ։ Մի խոսքով բուրժուական լրագրական երգեհոնի ռեպերտուարը»։[2]

Հետաքրքրական է Սպանդարյանի «Մ. Գոր-

[1] Ս. Սպանդարյան, Հոդվածներ, էջ 27—28։

[1] Ս. Սպանդարյան, Հոդվածներ, նամակներ, փաստաթղթեր 1939 թ., էջ 101։

[2] Նույն տեղում, էջ 9։

կին դաստիարակության մասին» հոդվածը, որի մեջ նա կոնսպեկտի է ենթարկել կոմունիստական դաստիարակության մասին մեծ դրողի դասախոսությունը։ Մ. Գորկու նկատմամբ Ս. Սպանդարյանի և Շահումյանի գնահատականը ելնում է լենինյան դրույթներից։

Ս. Սպանդարյանը և Ստ. Շահումյանը «Կայծ», «Նոր խոսք» և «Պայքար» թերթերում համառ պայքար ծավալելով բանվոր դասակարդի, թշնամիների դեմ, մեծ չափով օգտագործում էին Մ. Գորկու ոևոլուցիոն շընչով գրված ստեղծագործությունները։

1906 թվին կադետների դեմ ուղղված հոդվածներից մեկում «Կայծ» թերթը գրում է. «Ազատության երգիչ Գորկին իր «Բաղեի երգը» գրվածքում բաղեի բերանով ասում է օձին. «Սողալու սովորը թռչել չի կարող»։ Նույնը պիտի ասել առհասարակ մեր, այսպես կոչված, «ժողովրդական ազատության» կուսակցության մասին ընդհանրապես և մեր Թիֆլիսի «կադետների» մասին մասնավորապես»։ Նույն թվականին կադետների դեմ ուղղված մի այլ հոդվածում «Նոր խոսք» թերթը գրում էր. «Հերիք է ինչ տարանք երկչոտ կադետների, այդ «հիմար պինգվիններ» հեղեմոնիան, որոնք իրենց ճարպոտ մարմինները վախկոտությամբ թաքցնում են ապառաժներում»։ «Թող ուժգին թնդա փոթորիկը»։

Ս. Սպանդարյանը նույնպիսի սրտառուչ տոգեր ունի նվիրած ուկրաինական ժողովրդի մեծ բանաստեղծ Տ. Գ Շեվչենկոյին։ Զայրույթով արտահայտվելով մեծանուն բանաստեղծի մահվան 50-ամյակի օրը Թբիլիսիի Զուբալովի անվան ժողովրդական տանը տրված բուլվարային, ցինիկ ներկայացումների առթիվ, Ս. Սպանդարյանը խստորեն դատապարտում է շփացած մեծատունների խայտառակ վերաբերմունքը, Շեվչենկոյին համարելով «ուկրաինական մեծ բանաստեղծ, բաղմատանջ պոետ, ժողովրդական գուսան»։

Ս. Սպանդարյանի մարքս-լենինյան գրականագիտական ըմբռնումները ավելի ցայտուն են դրսևորվել Լ. Ն. Տոլստոյի մասին գրած փոքրածավալ, բայց խիստ ուշագրավ հոդվածներում։

Ինչպես հայտնի է, 1908 թ. հռչակավոր դրոգի ծննդյան 80-ամյակի շուրջը բարձրացրած աղմուկը մի անգամ ևս մերկացրեց բուրժուական մամուլի կեղծ դեմքը, նրա բռնած արատավոր դիրքը Տոլստոյի ժառանգության գնահատման հարցում։

Բաքվի կադետների օրգան „Баку" և „Бакинский листок" թերթուկները սկսեցին իրենց հերթական բարբաջանքները բոլշևիկյան „Бакинский рабочий" թերթի դեմ, տարածելով այն լկտի հերյուրանքը, թե իբր բոլշևիկները ժխտում են Լ. Ն. Տոլստոյի ստեղծագործության համաշխարհային նշանակությունը։ Նույն թվականին „Бакинский рабочий" թերթում լույս է տեսնում Ս. Սպանդարյանի «Ազնիվ դայրույթ» հոդվածը (1908 թվին), որի մեջ բոլշևիկյան կրքոտությամբ պաշտպանելով լենինյան տեսակետը Լ. Ն. Տոլստոյի մասին, Սպանդարյանը վրդովված հարցնում է. «Ինչի՞ համար են Ն. Լենինի ասածները անպատկառ կերպով աղավաղում և փոխ առած համեմատություններ կատարում գրամոֆոնի հետ...»[1] Ուղենիշ ունենալով Լենինի «Լև Տոլստոյը որպես ռուսական ոևոլուցիայի հայելին» հանճարեղ հոդվածի այն տողերը, թե «Մի կողմից հանճարեղ գեղարվեստագետ, որ տվել է ոչ միայն ռուսական կյանքի անգուգական պատկերներ, այլև համաշխարհային գրականության առաջնակարգ երկեր։ Մյուս կողմից՝ ի քրիստոս խենթացյալ... բռնությամբ «չարին չհակառակելու» կրոնախև քարոզ»,[2] Ս. Սպանդարյանը, ի լուր ամենքի, հրապարակորեն հայտարարում է լենինյան գնահատականի ճշմարտացիությունը, միևնույն ժամանակ խիստ դատապարտում Տոլստոյի գնահատման հարցում արտահայտած լիբերալ բուրժուական «օբեկտիվիզմը»։ Նա պարզապես գրում է. «Մենք Տոլստոյին չենք գնահատել իբրև խոսքի արվեստագետի, իբրև մարդկային հոգին ճանաչողի, այս առթիվ երկու կարծիք չի կարող լինել։ Մենք նրան գնահատել ենք իբրև քարոզչի, իբրև «նոր» կյանքի ուսուցչի—գտել ենք, որ նրա ուսմունքը ֆանտաստիկ է, ռեակցիոն, չի համապատասխանում պրոլետարիատի շահերին, ձեռնտու է բուրժուազիային»։

1911 թ. գրած իր մի այլ հոդվածում («Մեծարանք, թե ռեկլամ») Ս. Սպանդարյանը խոսելով Թբիլիսիի բուրժուական փաստաբանների կողմից «Հարություն» վեպի հերոս Նեխլյուդովի շուրջը կազմակերպած «դրական դատի» մասին, քարը քարի վրա չի թողնում, հասարակության լայն խավերին ներկայացնելով բուրժուական շաղակրատների սարքած «աքլորակռիվը»։

«Դա հասարակությանը դվարճացնող մի «աքլորակռիվ» էր։ Մտքի աղքատություն, աշխարհայացքի բացակայություն, աղքատություն գրական տեսակետից,—գրում է Ս. Սպանդարյանը,—ահա Լ. Ն. Տոլստոյին տե-

---

[1] Ս. Սպանդարյան, Հոդվածներ, էջ 9։

[2] Վ. Ի. Լենին, Գրականության մասին, էջ 59—60, 1948 թ.։

գական փաստաբանների կողմից մեծարելու. արդյունքը»։[1]

Ս. Սպանդարյանը դառնացած սրտով արտահայտվելով ստոլիպինյան դաժան բռնությունների մասին, կոչ է տնում ամեն կերպ փրկել կորստից ռուս ժողովրդի գրականությունն ու արվեստը, որ ցարիզմը դարձրել է «ռուսաց պատմության խորթ զավակը... նրա մեծ նահատակը»։[2]

Ռուս գրականությունը համարելով աշխարհի մեծ և առաջավոր գրականությունը, որ վիթխարի դեր է կատարել և կատարում է ոչ միայն Եվրոպայի, այլև Ասիայի, այդ թվում հայ ժողովրդի կուլտուրական զարգացման մեջ, Ս. Սպանդարյանը յուրաքանչյուր ազնիվ քաղաքացու պարտքն է համարում բոլոր ուժերով պաշտպանել ռեակցիայի հարվածներից «բազմաչարչար ռուս գրականությունը... Ազգային պարծանք և գանձարան հանդիսացող մեր աշխարհ նվաճած գրականությունը...», որը «իր սեփական տանը հրապարակային դատապարտության է ենթարկվում»։

Որքան անկեղծություն և ճշմարտություն կա Սպանդարյանի վերոհիշյալ խոսքերի մեջ։ Հայ բազմաթիվ առաջավոր գրողներ (Ա. Ս.-րովյան, Մ. Նալբանդյան, Հ. Թումանյան, Հ. Հովհաննիսյան, Ավ. Իսահակյան և այլն), որոնք իրենց ստեղծագործության ճանապարհին մեծ չափով օգտվել են ռուս կլասիկ գրականությունից, մեծագույն սիրով և երախտագիտությամբ են արտահայտվել ռուս գրականության համաշխարհային դերի և նշանակության մասին։ Ռուս մեծ գրականությունը, ռուս և հայ գրական կապերը ոչ միայն նպաստել և նպաստում են հայ գրականության զարգացմանը, այլ, որ ամենակարևորն է, նպաստել և նպաստում են երկու եղբայրական ժողովուրդների բարեկամության և համագործակցության ամրապնդմանը, որի նշանակությունն ինչպես անցյալում, առավել այժմ՝ հսկայական է։

Պատահական չէ, որ գեռ 1911 թվին Ս. Սպանդարյանը գրում է. «Ռուս գրականությունը նվաճել ու գրավել է ամբողջ աշխարհը, իսկ ռուսական գիտությունը պատվավոր տեղ է բռնել մյուս երկրների շարքում»։[1] Ռեակցիայի շրջանում գրած իր հոդվածներում Ս. Սպանդարյանը բազմիցս վկայակոչելով ռուս ռևոլուցիոն դեմոկրատներ՝ Բելինսկուն, Չերնիշևսկուն, Գերցենին, Օգարևին և մյուսներին, որոնք, ինչպես նա է ասում, «Իրենց սրտի արյունը, իրենց ջղերի հյութը ի սպաս են դրել կրտսեր եղբոր, իրենց երկրի լուսավորության ու ազատագրման գործին»[2], կոչ է անում՝ ոչնչացնել ցարիզմը և ստեղծել պրոլետարական դիկտատուրա։

Ինչպես տեսնում ենք, մարտնչող բոլշևիկ Ս. Սպանդարյանը գրականության և արվեստի դիրքերից նույնպես անվրեպ կրակել է բանվոր դասակարգի թշնամիների դեմ, մինչև վերջը մերկացրել նրանց հակաժողովրդական պլանները, անձնվիրաբար պաշտպանել Լենինի—Ստալինի պարտիայի քաղաքականությունը։

Ս. Սպանդարյանի «Հոդվածներ» ժողովածուն ունի ուսուցողական և դաստիարակչական մեծ նշանակություն։ Հայ մարքսիստական գրականության մեջ Ս. Սպանդարյանը, ինչպես նաև Ստ. Շահումյանը, այն առաջին և խոշոր դեմքերն են, որոնք շարունակելով մեծ ռևոլուցիոն դեմոկրատ Մ. Նալբանդյանի քննադատական դպրոցի առողջ տրադիցիաները, հասարակական կյանքի նոր պայմաններում, մարքս-լենինյան լույսի տակ, զարգացրին և բարձրացրին նոր աստիճանի վրա։

Անհրաժեշտ է մոտիկից և հանգամանորեն ուսումնասիրել Լենինի և Ստալինի հավատարիմ գինակից, անմոռաց Ս. Սպանդարյանի կյանքն ու ստեղծագործությունը և մասսաների սեփականությունը դարձնել բոցաշունչ բոլշևիկի թողած անմահ ժառանգությունը։

Ժողովածուն կազմված է խնամքով և գիտական բարեխղճությամբ։

Ս. ՍԱՐԳՍՅԱՆ

[1] Ս. Սպանդարյան, Հոդվածներ, էջ 11։
[2] Նույն տեղում, էջ 13։

[1] Ս. Սպանդարյան, Հոդվածներ, էջ 10։
[2] Նույն տեղում, էջ 18։